

ՄԵՌՈՆՕՐՀՆԵՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ

«Միտոնը ձէթ է ու ծաղիկ՝ իբրեւ նիւթեղէն գոյութիւն: Բայց մեզի համար կը փոխակերպուի խորհուրդի, իմաստի ու կեանքի, երբ կը հանդիպի մեր հաւատքի հրաշակերտող հոսանքին ու ազգային գիտակցութեան ներզօր կրակին»:

ԳԱՐԵԳԻՆ Բ
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

Ս. թ. հոկտեմբերի 9-ին Անթիլիասում, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Ս. Աթոռում, տեղի ունեցավ սրբալույս Մեռոնի օրհնության սրբազան արարողությունը: Այդ առթիվ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը պաշտոնական գրություն էր ուղարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ հրավիրելով Ամենայն Հայոց Հայրապետությանը մասնակցելու Մեռոնօրհնեքի հանդիսություններին: Ընդառաջելով եղբայրական այդ հրավերին՝ ազգիս Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսը, որպես Մայր Աթոռի ներկայացուցիչներ, Անթիլիաս ուղարկեց Ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանին և Մայր Աթոռի միաբան Տ. Սերովբե աբեղա Իսախանյանին:

Մայր Աթոռի ներկայացուցիչները Անթիլիաս են հասնում հոկտեմբերի 5-ին և նույն օրն իսկ ընդունվում Գարեգին Բ կաթողիկոսի կողմից: Վեհափառը նախ բարի գալուստ է մաղթում նրանց, ապա իր ուրախությունը հայտնում Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչների բարեբաստիկ ժամանման առթիվ: Ընդունելության ընթացքում Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը Տանն Կիլիկիո Աթոռի գահակալին է փոխանցում Հայոց Հայրապետի ջերմ ողջույնները և, որպես հայրենական հիշատակ, նրան հանձնում Նորին Սրբության ուղարկած արծաթակուռ մեռոնաթաւի աղլավնին ու Կիլիկիո Հայոց թագավոր Լևոն Բ-ի գունագեղ մեկ մանրանկարը:

Հոկտեմբեր 4—7 օրերին Անթիլիաս են ժամանում նաև Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպս. Տերտերյանի ներկայացուցիչ Տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանը, ինչպես և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները, վարդապետներ ու քահանա հայրեր:

Մեռոնօրհնեքի հանդիսությունները, համաձայն նախապես պատրաստված հայ-

տուգիր-ժամանակացույցի, սկիզբ են առնում հոկտեմբերի 8-ին Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում Թարգմանչաց տոնի առիթով մատուցված ս. պատարագով: Պատարագիչն էր Կիլիկյան ուխտի միաբան Տ. Անուշավան ծ. վրդ. Դանիելյանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, գլխավորությամբ Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի, քահանայից, վարդապետաց և եպիսկոպոսաց դասը Վեհարանից թափորով առաջնորդվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճար, ուր տեղի է ունենում Հրսկումի հոգեպարար արարողություն: Հավարտ արարողության Մեծի Տանն Կիլիկիո աթոռակալը սրբազան տաճարի խընկաբույր ու խորհրդավոր կամարների ներքո հայցում է ամենակալ Աստծուն, որ արժանացնի բոլորին մասնակից դառնալու Մեռոնօրհնեքի արարողությանը, զորավիգ ու ապավեն լինի հայ ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, պարգևի խաղաղություն լիբանանյան հայրենիքին, որի փոթորկահույզ ու խավար երկինքը ահա արդեն երկրորդ տասնամյակն է, ինչ կարոտ է խաղաղության աղավնու լուսավոր ճախրանքին:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՄԵՌՈՆՕՐՀՆԵՔ

Հոկտեմբերի 9: Կիրակի: Հակառակ Լիբանանի տագնապալի ու անապահով կացությանը, վաղ առավոտյան հայորդիները՝ այր թե կին, ծեր թե երիտասարդ, խմբվում են Մայրավանքի բակում՝ վերանորոգելու իրենց հավատքը հույսի ու սիրո ներշնչումներով, հույսի ու սիրո՝ հանդեպ Հայ Եկեղեցու ու նախնյաց հավատքի, հանդեպ հայոց հայրենիքի, հանդեպ հայության արդար դատի ու երազանքների հաղթանակի: Յոթ տարին մեկ անգամ խմբվում են հայորդիները՝ հաղորդվելու հոգենորոգ այս արարողությանը, առանձին խորհրդավորությամբ ու շուքով, որովհետև, ինչպես շեշտում է Գարեգին Բ կաթողիկոսն իր քարոզի մեջ՝ «Միւռոնը մեր Եկեղեցւոյ ամենէն նուիրական սրբութիւններէն մեկն է: Սուրբ խաչէն ետքը ամենէն շատ յարգուած, ժողովուրդի կեանքին մէջ այնքան տիրականօրէն ներկայ. եւ անոր պատրաստութիւնը չի նմանիր աշխարհի ոևէ մէկ ուրիշ եկեղեցիի մէջ Միւռոնի պատրաստութեան: Մեզի համար իւրայատուկ է այս արարողութիւնը»:

Առավոտյան ժամը 9.30-ն է: Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարի զույգ զանգերը զողանջով, եկեղեցականների դասի ուղեկցությամբ, Գարեգին Բ կաթողիկոսը, իր շուրջն ունենալով տասներկու զգեստավորված եպիսկոպոսներ ու արքեպիսկոպոսներ, հավատացյալ հայորդիների ուրախ ու զվարթ հայացքների ներքո Վեհարանից առաջնորդվում է դեպի Մայրավանքի շրջափակում գտնվող 1915 թ. Ապրիլյան նահատակների հուշարձան-մատուռի առջև աստղաստված խորան: Սկսվում է ս. պատարագը, որը, համաձայն Մաշտոցի, շարունակվում է մինչև «Ողջոյն»-ի պահը: Մինչ այդ, միաբան հայրերը՝ գլխավորությամբ Տ. Ղևոնդ, Տ. Արտավազդ ու Տ. Վարդան սրբազանների, Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարից պատարագի Ս. Սեղան են բերում հին Մեռոնը, ապա Ամենայն Հայոց Հայրապետի կողմից ուղարկված Մեռոնը, անուշաբույր բալասանը և Մեռոնօրհնեքի շղարշապատ կաթսան, որ քառասուն օրեր շարունակ գտնվել էր մնում տաճարի աղոթաբույր կամարների ներքո:

Սկսվում է Մեռոնօրհնեքի սրբազան արարողությունը: Նախ զգեստավորված եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, Գարեգին Բ կաթողիկոսը հերթով ընթերցում են Մաշտոցից համապատասխան հատվածներ, որոնց ընդմիջումներին դրպրաց դասը երգում է «Որ յառաջագոյն յօրէնս» շարականը, Մեռոնօրհնեքի «Հայր Ամենակալ» մեղեդին և Ներսես Շնորհալի հայրապետի գրած «Նոր օրհնութիւն»-ը:

Ապա Տանն Կիլիկիո գահակալը «Առաքելոյ Աղաւնոյ» շարականի երգեցողությամբ Մեռոնի կաթսայի մեջ է լցնում անուշաբույր բալասանը, հին Մեռոնը, որպես անցյալը ներկային շաղկապող խորհրդանիշ, ապա Մայր Աթոռ Ս. Էջմիածնում օրհնված Մեռոնը, որպես Հայ Եկեղեցու անքակտելի ու անբեկանելի միության խորհրդանիշ: Երջանիկ է հայ ժողովուրդը: Մայրավանքի շրջափակը լցվում է ծափողջույններով, դեպի երկինք են թեվածում սպիտակ աղավնիները:

Այնուհետև Գարեգին Բ կաթողիկոսը «Օրհնեսցի եւ սրբեսցի Մեռոնս այս նշանաւ» բառերն արտասանելով Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով երեք անգամ տեառնագրում է նոր Մեռոնը և ապա ընթերցում Մեռոնօրհնեքի վերջին աղոթքը. «Արդ, այժմ և մեք պատրաստելով զսա որպէս կաթն՝ մատուցանեմք, զի ամենեքեան, որ ի սմանէ առնուցուն՝ արժանի լիցին ընդունել զհաստատուն կերակուր, զճշմարիտն, զերկնայինն՝ ի շնորհաց Միածնի քո Տեառնն Մերոյ Յիսուսի Քրիստոսի...»:

Արարողության ավարտին Կիլիկյան Աթոռի գահակալը ոգեշունչ քարոզով ներ-

կաներին նախ բացատրում է Մեռոնի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում՝ ի մասնավորի նշելով. «Հայ ժողովուրդի դարաւոր գոյութեան խորհրդանիշներէն մէկն է Միւռոնը, եւ Միւռոնի օրհնութիւնը յատուկ գրաւչութիւն մը ունի մեր ամբողջ ժողովուրդի համար»:

«Այսօր ո՞վ է այն հայը, որ չի հպարտանար թէ իր ճակտին հայու Միւռոն ունի, եւ նկատեցիք դուք, որ երբ վերջերս ողբերգական դէպքերէն ետքը Ազրպէյճանի մէջ, Միւռոն չտեսած մեր ժողովուրդի զաւակները Սումկայիթէն եւ այլ շրջաններէ գաղթական եկան Հայաստան, Ս. Էջմիածնի մէջ առաջին պարտականութիւնը եղաւ Հայոց Կաթողիկոսին՝ մկրտել եւ դրոշմել, կնքել զանոնք իբրեւ հայ»:

Քարոզի ընթացքում Գարեգին Բ կաթողիկոսը ուրախ ու գոհունակ սրտով ողջունում է Ամենայն Հայոց Հայրապետության մասնակցությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մեռոնօրհնեքին՝ մատնանշելով. «Մենք անհունօրէն ուրախ ենք, որ այսօր, Մեր յիշողութեան մէջ առաջին անգամ ըլլալով, եւ ընդառաջելով Մեր հրաւերին, Ամենայն Հայոց Հայրապետը իր ներկայացուցիչները ղրկած է, իր մասնակցությունը բերելու համար այս Միւռոնօրհնեքի սուրբ արարողութեան: Սա պահուն բեմին վրայ է Յուսիկ արքեպիսկոպոսը, որպէս ներկայացուցիչ Մեր աւագ Եղբօր՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա կաթողիկոսին. դուք ձեր աչքերով տեսաք Ս. Էջմիածնի ներկայութիւնը մեր Միւռոնօրհնէքին մէջ, Հայաստանի հողին ներկայութիւնը, հայ ժողովուրդի հոգիի միասնութիւնը, միաձուլումը մեր հետ այսօր: Կ'ուզեմ որ բոլորդ ալ այսօր ցնծաք Հայաստանեայց Եկեղեցւոյ անբեկանելի, անխախտելի, անայլայլելի միութեան այս գեղեցիկ արտայայտութեան համար. ու կը հաւատանք եւ կը հաստատենք—որովհետեւ մեր հոգիին ձայնն է այդ, ինչպէս մեր արեան գոյնն է կարմիր, այնպէս եւ ձայնն է ջինջ ու հարազատ—թէ՝ այնքան ատեն որ մենք ունինք երկու կաթողիկոսութիւններ, պիտի մնանք միշտ մէկ Եկեղեցի: Ան որ Միւռոնով կ'օծուի, անոր համար էջմիածնական ու անթիլիասական չկայ, անոր համար թէ՛ էջմիածնական կայ եւ թէ՛ անթիլիասական, որովհետեւ մէկ է Հայ Եկեղեցին եւ անոր սիրտի երկու անբաժան

Ս. Էջմիածնից տարված մեռոնի միախառնումը նոր օրհնվող մեռոնին

մասնիկներն են Ս. Էջմիածինը եւ Կիլիկեան դարաւոր Աթոռը: Հետեւաբար, Սրբազան Հայր եւ Հայր Սուրբ, նախամեծար Մայր Աթոռին տարէք Մեր եղբայրական սիրոյ ողջոյնը եւ վկայեցէք որ Մենք կը մնանք միշտ մէկ»:

Այնուհետեւ Կիլիկյան Աթոռի գահակալը մաղթում է նաև, որ այս Մեռոնօրհնեքը հայության համար դառնա գոտեպնդումի ու վերանորոգության, ազգային ոգու և գիտակցության բարձրացման մի պահ. «Կը մաղթեմ որ այս Միւռոնօրհնութիւնը նաեւ բալասան մը ըլլայ մեր ժողովուրդի բազմատեսակ վէրքերուն: Այո, վէրքեր ունինք տակաւին, վէրքեր ունեցանք նաեւ վերջերս: Մայր վէրքը, որ դեռ կ'արիւնի, ցեղասպանութեան վէրքն է, որ տակաւին չէ սպիացած. սա պահուն, կը գտնուինք դիմացը այս մատուռին, որուն մէջ ամփոփուած են Տէր Զօրի նահատակներու ոսկորները: Վիրաւոր է մեր ժողովուրդը նաեւ այստեղ, Լիբանանի մէջ, ուրիշ գաղութներու մէջ: Տագնապի մէջ է մեր ժողովուրդը նաեւ Հայաստանի մայր հողին վրայ եւ Ղարաբաղի մէջ: Թող այսօր այս Միւռոնօրհնեքը ամբողջ հայութեան համար դառնայ այնպիսի պահ մը, որ ուխտի պահի վերածուի ու հաւատարմութեան»:

Վերջում քարոզիչ կաթողիկոսը իր սրտի խոսքերն է առաջում առ Բարձրյալն Աստված՝ աղոթելով. «Ով Տէր երկնի եւ երկրի, պահէ այս ժողովուրդը անաղարտ, ինչպէս դուն եւ անաղարտ, պահէ մեր հայրենիքը ամբողջ եւ անխոով, պահէ մեր ժողովուրդը ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի վասն փառաց քոց եւ վասն յաղթանակի ժողովրդեանն մերոյ, յաւիտեանս յաւիտենից»:

Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարն ու մեռոնօրհնեքի դեմը՝ շրջապատված ուխտավորների հոծ բազմությամբ

Հավարտ Մեռոնօրհնեքի, շարունակվող պատարագի «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» մեղեդու քաղցրալուր հնչյունների տակ, Գարեգին Բ կաթողիկոսը, եպիսկոպոսաց դասը և միաբան հայրեր համբուրում են սրբազան կաթսան՝ սիրո ու եղբայրության աստվածահաճո ողջույնը փոխանցելով հավաքված հայորդիներին:

Ավարտվում է հանդիսավոր ս. պատարագը: Պատարագիչ կաթողիկոսը «Պահ-

պանիչ»-ով և Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով օրհնում է հավատացյալներին և թափորով առաջնորդվում Վեհարանի գահասրահ: Այստեղ նա ընդունում է եպիսկոպոսների, վարդապետների, քահանա հայրերի, ազգային իշխանության ներկայացուցիչների շնորհավորանքներն ու բարեմաղթությունները այս ևսմոռաց ու պատմական տոնի առիթով: Իսկ հավատացյալ հայորդիներ մինչև ուշ երեկո ջերմեռանդորեն մոտենում ու իրենց դողդոջ շուրթերը երկյուղածությամբ հպում էին սրբազան կաթսային՝ մեկ անգամ ևս աղոթելով առ Բարձրյալն Աստված՝ վասն խաղաղության ամենայն աշխարհի, վասն հայության արդար երազանքների իրականացման, վասն Հայաստանյայց Եկեղեցու միության ու անսասանության:....

* * *

Մեռոնօրհնեքի հանդիսությունների օրերին, հոկտեմբերի 15-ին և 16-ին, Անթիֆիասի Մայրավանքում, հովանավորությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն, կազմակերպվում է Հայ Գրքի 11-րդ ցուցահանդես-վաճառքը՝ «Նոր տեսիլքների հույսով, նոր նվաճումների հավատքով» խորհրդանշական անվանումով:

Բազմահարյուր հայորդիներ էին խմբվել Մայրավանքի շրջափակում տեղադրված հատուկ սեղանների առջև, որոնց վրա շարադասված էին բազմաբնույթ ու բազմաբովանդակ գրքեր՝ հաղորդակցվելու համար հայ հանճարին: Ցուցահանդեսի բացման առիթով Գարեգին Բ կաթողիկոսը իր հայրական պատգամն է հղում հավաքվածներին՝ վեր հանելով հայ գրքի կարևոր դերը հայ ժողովրդի գոյատևման ու հայ լեզվի ու մշակույթի զարգացման գործում:

Ցուցահանդես-վաճառքին իրենց մասնակցությունն են բերում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, ինչպես նաև «Համազգային», «Շիրակ», «Սևան», «Տոնիկյան», «Գառնի» և այլ հրատարակչությունները:

Հայ գրքի 11-րդ ցուցահանդես-վաճառքը շարունակվում է մինչև հոկտեմբերի 23-ը Մայրավանքի տարածքում գտնվող Կյուլպենկյան սրահի մեջ:

Հոկտեմբերի 18-ին Վեհարանում, ի պատիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչների, տրվում է հրաժեշտի ճաշ, որի ընթացքում Կիլիկյան Աթոռների գահակալը խնդրում է Ամենայն Հայոց Հայրապետին փոխանցել իր եղբայրական սիրո ողջույնն ու շնորհակալական զգացումները: Ապա Հուսիկ սրբազանը շնորհակալության խոսք է ուղղում Գարեգին Բ կաթողիկոսին նրա ջերմ ու հայրական ընդունելության և ցուցաբերած ուշադրության համար:

Հաջորդ օրը, առավոտյան, Մայր Աթոռի ներկայացուցիչները, հրաժեշտ տալով Գարեգին Վեհափառին, ինքնաթիռով վերադառնում են Մայր Աթոռ:

ՍԵՐՈՎԲԵ ԱԲՂ. ԻՍԱԽԱՆՅԱՆ